# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*12-ը սեպտեմբերի 2023թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 30*

*/Զեկուցող՝ Թ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ/*

***N 112 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Հաստատել Աշտարակ համայնքի ավագանու 12.09.2023թ. նիստի օրակարգը /կցվում է/:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 19* *ԴԵՄ- 0* *ՁԵՌՆՊԱՀ – 0*

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ
ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ
ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ
ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
ԱԶԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ
ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*Տ. Գալստյանը և Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի ՆԻՍՏԻ**

**ՕՐԱԿԱՐԳ**

1. Աշտարակ համայնքի ավագանու նիստի օրակարգը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Թ. Շահվերդյան/

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2024 թվականի ՀՀ պետական բյուջեից սուբվենցիայի ստացման հայտերին համաձայնություն տալու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

3. Տեղական վճարներ սահմանելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

4. Հարկային արտոնություն տալու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

5. <<Աշտարակտրանս>> փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու, կանոնադրական կապիտալը, կանոնադրությունը և հաստիքացուցակը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

6. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 24.12.2021թ. N 10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

7. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 09.12.2022թ. N 178-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

8. Համայնքային սեփականություն հանդիսացող հենասյուները <<Անուշավան Գաբրիելյան Պողոսի>> ԱՁ-ին վարձակալության տրամադրելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

9. Անհատույց օգտագործման համար տարածք տրամադրելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Քոթանյան/

10. Համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Քոթանյան/

11. Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքն անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

12. Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքերն անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

13. Համայնքային սեփականություն հանդիսացող շարժական գույքերն անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

/Զեկուցող՝ Դ. Գրիգորյան/

14. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

/Զեկուցող՝ Դ. Գրիգորյան/

15. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում, Արունճ, Օհանավան և Աղձք բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

16. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

17. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

18. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

19. Աշտարակ համայնքի Օշական բնակավայրում նրբանցքների և փակուղիների համարակալման մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

20. Ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

21. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի երկրորդ նիստի օրը սահմանելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Մ. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*12-ը սեպտեմբերի 2023թ.*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՍՏԱՑՄԱՆ ՀԱՅՏԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

*Արձ.- 30*

*/Զեկուցող՝ Շ. ՎԱՀԱՆՅԱՆ/*

***N 113 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 25-րդ ենթակետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշման 1-ին կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով սահմանված կարգերի դրույթներով, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1.Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել ներկայացնելու Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի «Կոմիտասի» անվան զբոսայգու հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի բացօթյա կինոթատրոնի շենքի վերակառուցապատման, հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի, Աշտարակ քաղաքի թվով՝ 11 բազմաբնակարան շենքերի էներգախնայող միջոցառումների՝ ջերմամեկուսացման, շքամուտքերի և տանիքների վերանորոգման աշխատանքների իրականացում», «Աշտարակի համայնքապետարանի վարչական շենքի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի «Կոմիտասի» անվան զբոսայգում դեկորատիվ ջրավազանների և շատրվանների կառուցում», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի և 31 բնակավայրերի փողոցների ասֆալտապատման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքում թվով՝ 35 ավտոկանգառների կառուցում և տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի կարիքների համար թվով մեկ քաղաքային ավտոբուսի ձեռքբերում», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի մշակույթի տան շենքի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Ավան, Լեռնարոտ, Վերին Սասունիկ, Կոշ, Ուջան, Տեղեր և Բյուրական բնակավայրերի խմելու ջրի ցանցի հիմնանորոգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի, Բյուրական, Կարբի, Կոշ, Ոսկեհատ, Ոսկեվազ, Ուջան, Փարպի, Օհանավան և Օշական բնակավայրերի գազիֆիկացման աշխատանքներ», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի և 31 բնակավայրերի փողոցների լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի թիվ 3

«Հովիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի թիվ 2 «Արևիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի բակային տարածքների հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքների իրականացում», «Աշտարակ համայնքի բնակավայրերում՝ Արուճի, Կարբիի, Փարպիի բժշկական ամբուլատորիաների և Ուջանի վարչական շենքերի հիմնանորոգման և տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում» և «Աշտարակ համայնքի Օշական բնակավայրի «ԱՆԱՀԻՏ» մսուր մանկապարտեզի շենքի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում» (այսուհետ՝ ծրագրեր) թվով՝ 16 սուբվենցիայի հայտերին՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել որ՝

1) Սուբվենցիայի ստացման համար գործող կարգով կազմել և ՀՀ Արագածոտնի մարզպետարան ներկայացնել տնտեսական զարգացման ծրագրերի ֆինանսավորման հայտերը:

2) ծրագրի ներկայացման համար համայնքի 2024 թվականի բյուջեով բավարար ֆինանսական միջոցներ են նախատեսված ծրագրերը իրականացնելու և համայնքային ներդրում կատարելու համար:

3) ծրագրերի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանցից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է Աշտարակ համայնքի ղեկավարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>**

*ԿՈՂՄ - 19* *ԴԵՄ- 0* *ՁԵՌՆՊԱՀ – 0*

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ
ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ
ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ
ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
ԱՉԱՏ ՁԱՔԱՐՅԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱՋԻՋՅԱՆ
ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*Տ. Գալստյանը և Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

*Հավելված 1*

*Հաստատված է համայնքի ավագանու*
*12.09.2023թ. N 113-Ա որոշմամբ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐ**

1) «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի «Կոմիտասի» անվան զբոսայգու հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքների իրականացում»,

2) «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի բացօթյա կինոթատրոնի շենքի վերակառուցապատման, հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում»,

3) «Աշտարակ համայնքի, Աշտարակ քաղաքի թվով՝ 11 բազմաբնակարան շենքերի էներգախնայող միջոցառումների՝ ջերմամեկուսացման, շքամուտքերի և տանիքների վերանորոգման աշխատանքների իրականացում»,

4) «Աշտարակի համայնքապետարանի վարչական շենքի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում»,

5) «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի «Կոմիտասի» անվան զբոսայգում դեկորատիվ ջրավազանների և շատրվանների կառուցում»,

6) «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի և 31 բնակավայրերի փողոցների ասֆալտապատման աշխատանքների իրականացում»,

7) «Աշտարակ համայնքում թվով՝ 35 ավտոկանգառների կառուցում և տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում»,

8) «Աշտարակ համայնքի կարիքների համար թվով մեկ քաղաքային ավտոբուսի ձեռքբերում»,

9) «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի մշակույթի տան շենքի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում»,

10) «Աշտարակ համայնքի Ավան, Լեռնարոտ, Վերին Սասունիկ, Կոշ, Ուջան, Տեղեր և Բյուրական բնակավայրերի խմելու ջրի ցանցի հիմնանորոգման աշխատանքների իրականացում»,

11) «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի, Բյուրական, Կարբի, Կոշ, Ոսկեհատ, Ոսկեվազ, Ուջան, Փարպի, Օհանավան և Օշական բնակավայրերի գազիֆիկացման աշխատանքներ»,

12) «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի և 31 բնակավայրերի փողոցների լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների իրականացում»,

13) «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի թիվ 3 «Հովիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում»,

14) «Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի թիվ 2 «Արևիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի բակային տարածքների հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքների իրականացում»,

15) «Աշտարակ համայնքի բնակավայրերում՝ Արուճի, Կարբիի, Փարպիի բժշկական ամբուլատորիաների և Ուջանի վարչական շենքերի հիմնանորոգման և տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում»,

16) «Աշտարակ համայնքի Օշական բնակավայրի «ԱՆԱՀԻՏ» մսուր մանկապարտեզի շենքի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացում»:

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ** **Ս. ՍԱՀԱԿՅԱՆ**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*12-ը սեպտեմբերի 2023թ.*

**ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

*Արձ.- 30*

*/Զեկուցող՝ Շ. ՎԱՀԱՆՅԱՆ/*

**N 114 - Ա ՈՐՈՇՈՒՄ**

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Աշտարակի համայնքապետարանի սեփականություն հանդիսացող /համայնքային կազմակերպություններին փոխանցված/ JCB 3CXD մակնիշի տրակտորները ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրելու համար սահմանել տեղական վճար՝ 12 000 /տասներկու հազար/ ՀՀ դրամ ժամավճարով:

2. Աշտարակ համայնքի վարչական տարածքում կեղտաջրերի հեռացման համար սահմանել տեղական վճար՝ յուրաքանչյուր խորանարդ մետրի համար 3000 /երեք հազար/ ՀՀ դրամ:

3. Ներհամայնքային երթուղու ուղեվարձը 1 անձի համար սահմանել 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 19* *ԴԵՄ- 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ
ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ
ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ
ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
ԱԶԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ
ԱՐՄԵՆ ՇԱՎՈՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*Տ. Գալստյանը և Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*12-ը սեպտեմբերի 2023թ.*

## ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 30*

*/Զեկուցող՝ Շ. ՎԱՀԱՆՅԱՆ/*

***N 115 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով որոշ հարկատուների դիմումները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, <<Գույքահարկի մասին>> օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի, <<Հողի հարկի մասին>> օրենքի 10-րդ հոդվածի, ՀՀ հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ կետի, 245-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի տրամադրել գույքահարկի, հողի հարկի, անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գծով արտոնություն /հավելված 1/:

**<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>**

*ԿՈՂՄ - 18* *ԴԵՄ- 0* *ՁԵՌՆՊԱՀ – 0*

| | |
|---|---|
| ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ | ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ |
| ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ | ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ |
| ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ | ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ |
| ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ |
| ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ | ԱԶԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ |
| ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ | ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ |
| ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ |

***Տ. Գալստյանը, Ս. Օվոյանը և Ա. Շմավոնյանը չեն մասնակցել քվեարկությանը:***

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

*Հավելված 1*
*Հաստատված է համայնքի ավագանու*
*12.09.2023թ. N 115-Ա որոշմամբ*

| Հ/Հ | ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ | ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՍՑԵ | ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՀԱՍՑԵ | ՀԾՀ | ԳՈՒՅՔԱ ՀԱՐԿ | ՀՈՂԻ ՀԱՐԿ | ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿ | ՓՈԽԱ ԴՐԱՄԻՋՈՑ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Վարդան Օնիկի Թովմասյան | Աշտարակ համայնք, Թամազյան փ., 31 տ. | Աշտարակ համայնք | 2714710166 | 19794 | 5273 | | |
| 2 | Ժորա Գրիգորի Քոչարյան | Երևան, Կենտրոն, Ծատուրյան փ., 34 շ., 32 բն. | Աշտարակ համայնք | 1601410247 | 33441 | 11462 | | |
| 3 | Անատոլի Սերգեի Պետրոսյան | Աշտարակ համայնք, Արարատյան փ., 4 տ. | Աշտարակ համայնք | 1808590678 | 48594 | | | |
| 4 | Արշակ Անդրանիկի Հարությունյան | Աշտարակ համայնք, Միկոյան եղբ. փ.,83 տ. | Աշտարակ համայնք | 3401490192 | 30834 | 7200 | | |
| 5 | Ասյա Վաղարշակի Գասպարյան | Աշտարակ համայնք, Մուղնի 6 թղմ., 58 տ. | Աշտարակ համայնք | 6707390171 | 64832 | 13883 | | |
| 6 | Տիգրան Աշոտի Հովսեփյան | Աշտարակ համայնք, Ս. Շահազիզի փ., 78 տ. | Աշտարակ համայնք | 3604860350 | | 16669 | | |
| 7 | Կառլեն Նորիկի Փարվանյան | Աշտարակ համայնք, Ղ. Փարպեցու փ., 25 տ. | Աշտարակ համայնք | 3002550124 | 9011 | 5979 | | |
| 8 | Վահան Վաչագանի Ֆլիկյան | Աշտարակ համայնք, Րաֆֆու փ., 51 տ. | Աշտարակ համայնք | 2501581245 | 29058 | 11366 | | |
| 9 | Ալեքսան Սիանոսի Հովհաննիսյան | Աշտարակ համայնք, Պռոշյան փ., 161 տ. | Աշտարակ համայնք | 3305500263 | 69086 | | | |
| 10 | Կարեն Գարեգինի Մարտիրոսյան | Աշտարակ համայնք, Փարպի բնակավայր, Դ.Տեր-Մկրտչյան փ., 10/1 տ. | Աշտարակ համայնք | 3504840129 | 72961 | | | |
| 11 | Հովհաննես Սերգեյի Եկշատյան | Երևան, Արաբկիր, Հովսեփ Էմինի փ., 4 շ., 44 բն. | Աշտարակ համայնք | 2605710254 | 49960 | | | |
| 12 | Յուրիկ Միհրանի Մնացականյան | Աշտարակ համայնք, Օշական բնակավայր, Մաշտոցի փ. 78 տ. | Օշական բնակավայր | 1901460177 | | 34864 | | |
| 13 | Մարիամ Վիգենի Ղալաչյան | Աշտարակ համայնք, Պռոշյան փ., 13շ., 24 բն. | Ուջան բնակավայր | 6202670207 | | 13758 | | |
| 14 | Վարժուհի Համլետի Մուրադյան | Աշտարակ համայնք, Ագարակ բնակավայր, 15 փ., 3 տ. | Ագարակ բնակավայր | 6501900891 | | | | 202061 |
| | **Ընդամենը՝ ըստ հարկատեսակների** | | | | **427571** | **120454** | | **202061** |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **750086** | | | |

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. Մ Ա Հ Ա Կ Յ Ա Ն**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*12-ը սեպտեմբերի 2023թ.*

## «ԱՇՏԱՐԱԿՏՐԱՆՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Արձ.- 30*

*/Զեկուցող՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ/*

***N 116 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ, 28-րդ կետերի, 81-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի 2-րդ կետի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի, 67-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Աշտարակ համայնքի ղեկավարի առաջարկությունը, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Ստեղծել «Աշտարակտրանս» փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ ընկերություն):
2. Հաստատել ընկերության կանոնադրական կապիտալը՝ 1 000 000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ, որը համապատասխանում է 100 (մեկ հարյուր) հասարակ բաժնետոմսի՝ յուրաքանչյուրը 10 000 (տասը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով:
3. Հաստատել ընկերության կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի:
4. Հաստատել ընկերության հաստիքացուցակը՝ համաձայն N 2 հավելվածի:
5. Առաջարկել Աշտարակ համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ընկերության կանոնադրության պետական գրանցումը:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 18* *ԴԵՄ- 0* *ՁԵՌՆՊԱՀ – 0*

| | |
|---|---|
| ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ | ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ |
| ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ | ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ |
| ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ | ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ |
| ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ |
| ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ | ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ |
| ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ | ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ |
| ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ |

*Տ. Գալստյանը, Ս. Օվոյանը և Ա. Շմավոնյանը չեն մասնակցել քվեարկությանը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Հայաստանի Հանրապետության
Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու
2023 թվականի սեպտեմբերի 12-ի N 116-Ա որոշման

Կ Ա Զ Մ Վ Ա Ծ Է

*2023թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ---ԻՆ*
*ԲԱՂԿԱՑԱԾ Է --- ԹԵՐԹԻՑ*
*ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ ___ ՕՐԻՆԱԿ*
*ՕՐԻՆԱԿ ____*

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
______________________ԿՈՂՄԻՑ

«____»____________20 Թ.
ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ ____________
ՎԿԱՅԱԿԱՆ ______________
ՀՎՀՀ ______________

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023
ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի
ԹԻՎ 116-Ա ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

__________ Թ. Ճ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

(ստորագրություն)

«____»____________2023 թ.

# «ԱՇՏԱՐԱԿՏՐԱՆՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

# *Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն*

**Ք. ԱՇՏԱՐԱԿ 2023 ԹՎԱԿԱՆ**

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Աշտարակտրանս» փակ բաժնետիրական ընկերությունը (հետագայում՝ Ընկերություն) առևտրային կազմակերպություն հանդիսացող տնտեսական Ընկերություն է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի, որոնք բաշխվում են միայն նրա հիմնադիրների կամ նախապես որոշված այլ անձանց միջև:

1.2. Ընկերությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 116-Ա որոշմամբ:

1.3. Ընկերության միակ բաժնետերը Աշտարակ համայնքն է, որի անունից հանդես է գալիս Աշտարակ համայնքի ղեկավարը:

1.4 Ընկերությունն իր ֆիրմային անվանումը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված այլ վավերապայմաններ պարունակող կլոր կնիք, կարող է ունենալ դրոշմներ և ձևաթղթեր, նաև խորհրդանիշ, օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային, առևտրային նշաններ ու անհատականացնող այլ միջոցներ:

1.5 Ընկերության գործունեությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք), «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքով (այսուհետ՝Օրենք), Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև սույն կանոնադրությամբ:

1.6 Հիմնադրի և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են Օրեսնգրքով, օրենքով և սույն կանոնադրությամբ:

1.7 Ընկերությունն իրավաբանական անձ է և ունի իր բաժնետերերի գույքից առանձնացված, ինքնուրույն հաշվեկշռում հաշվառված գույք: Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Ընկերությունը պատասխանատու չէ բաժնետիրոջ պարտավորությունների համար:

Ընկերության բաժնետերը Ընկերության պարտավորությունների համար պատասխանատվություն չի կրում և իրեն պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում է Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

1.8 Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «Աշտարակտրանս» փակ բաժնետիրական ընկերություն

կրճատ՝ «Աշտարակտրանս» ՓԲԸ:

ռուսերեն լրիվ՝ « Аштарактранс» закритое акционерное общество

կրճատ՝ «Аштарактранс» ЗАО

անգլերեն լրիվ՝ «Ashtaraktrans» Closed Joint Stock Compony

կրճատ՝ «Ashtaraktrans» CJSC

1.9 Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝

Հայաստանի Հանրապետություն, Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հրապարակ 7:

## 2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:

2.2 Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝

ա/ Աշտարակի ուղևորատար տրանսպորտով (ավտոբուս և միկրոավտոբուս) ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններին (անկախ սեփականության ձևից) ծառայությունների մատուցում,

բ/ ուղևորատար տրանսպորտի հաշվառում, երթուղիներում շարժակազմի ռիթմիկ աշխատանքի ապահովում (անկախ սեփականության ձևից),

գ/ երթուղիներում շարժակազմի աշխատանքի գրաֆիկների մշակում և հաստատման ներկայացում, ինչպես նաև դրանց պահպանման նկատմամբ հսկողության իրականացում,

դ/Աշտարակի ներքաղաքային հասարակական տրանսպորտի , վերջնականգառներում (երթակարգավորման կետերում) պատշաճ աշխատանքային պայմանների ստեղծման համար անհրաժեշտ միջոցների ձեռնարկում,

ե/ Աշտարակ քաղաքում ուղևորափոխադրումներով զբաղվող կազմակերպություններին վճարովի ծառայությունների մատուցում,

զ/ տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկում, լվացում և նորոգում,

է/ Աշտարակ քաղաքում տուրիզմի զարգացմանը նպաստող ծառայությունների մատուցում:

2.3 Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով և այլ իրավական ակտերով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն: Օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված գործունեության առանձին տեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի (հատուկ թույլտվության) առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում:

2.4 Ընկերության իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված կարգով:

## 3.ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Ընկերությունը առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է: Ընկերությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

3.2 Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, օրենքով սահմանված կարգով բացված բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում, ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ արտարժույթով:

3.3 Ընկերությունն իրավունք չունի անցկացնել իր թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն կամ անսահմանափակ թվով անձանց և առաջարկել այլ կերպ ձեռք բերելու դրանք:

3.4 Ընկերությունը կարող է լինել այլ ընկերության (այդ թվում՝դուստր ու կախյալ) հիմնադիր (մասնակից) , բացառությամբ Օրենսգրքով, Օրենքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերի: Օտարերկրյա պետություններում դուստր կամ կախյալ ընկերությունների հիմնադրումը կամ մասնակցությունը կատարվում է դրանց գտնվելու վայրի երկրի օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

3.5 Ընկերությունն իրավունք ունի սույն կանոնադրության դրույթների, Օրենսգրքի, Օրենքի և այլ իրավական ակտերի համաձայն ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր և ներկայացուցչություններ), ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այլ պետությունների տարածքում:

Կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի գործունեություն իրականացնելու համար Ընկերությունը կարող է ստեղծել հիմնարկ:

Ընկերության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները իրավաբանական անձինք չեն և գործում են Ընկերության հաստատած կանոնադրությունների հիման վրա, նրանց ղեկավարները գործում են Ընկերության լիազորագրի հիման վրա:

3.6 Ընկերությունն իրավունք ունի.

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր ձևերով ձեռք բերել գույք , այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք, դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը,

- Օտարել, վարձակալության տալ, փոխանակել, օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ, լինել գրավառու և գրավատու,

- Ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով,

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տեղաբաշխել արժեթղթեր,

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել պայմանագրեր, ստանձնել իրավունքներ և կրել պարտավորություններ,

- Ինքնուրույն ընտրել իր արտաքին տնտեսական գործունեության վարման կարգը, այն իրականացնել անմիջականորեն, առանց միջնորդի կամ այլ կազմակերպության միջոցով:

- Ինքնուրույն պլանավորել իր գործունեությունը, կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների ծավալը, գները, իրենց մատակարարներին և արտադրանքը սպառողներին, օրենսդրությամբ սահմանված կարգով արտահանել և ներմուծել գույք, ծառայություններ մատուցել իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկությունների, կազմակերպությունների և քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցած ծառայություններից, այլ պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան իրականացնել ներդրումներ, ստեղծել իրավաբանական անձինք և (կամ) ձեռնարկություններ և անդամակցել իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկությունների,

- Ձեռք բերել իր կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի մի մասը,

- Օգտվել ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից,

3.7 Ընկերությունը պարտավոր է՝

- Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում և ներկայացնել ֆինանսական, վիճակագրական կամ այլ հաշվետվություններ,

- Աշխատանքային պայմանագրեր կնքել Ընկերության աշխատակիցների հետ,

- Պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից հասցրած վնասը՝ կնքած պայմանագրերը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, այլ անձանց սեփականության իրավունքը խախտելու համար,

- Օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել Ընկերության սնանկացման մասին այն դեպքում, երբ հնարավոր չէ բավարարել պարտատերերի օրինական գույքային պահանջները,

- Ապահովել ընկերության փաստաթղթերի (Ընկերության պետական գրանցման վկայականի, կանոնադրության, գույքի նկատմամբ, ինչպես նաև գույքային իրավունքներ հաստատող փաստաթղթերի, Ընկերության ներքին փաստաթղթերի, հիմնարկների կանոնադրությունների, հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, կառավարման մարմինների նիստերի արձանագրությունների, Ընկերության փոխկապակցված անձանց նշանակալից ու խոշոր

բաժնետերերի ցուցակների, կնքված պայմանագրերի, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի պահպանումը իր գտնվելու վայրում,

- Իր բաժնետերերին հնարավորություններ ընձեռել ծանոթանալու Ընկերության վերը թվարկված փաստաթղթերի հետ,

- Ընկերության բաժնետերերի թիվը Օրենքով սահմանված քանակը գերազանցելու և մեկ տարվա ընթացքում այդ թիվը մինչև սահմանված քանակը չնվազեցնելու դեպքում վերակազմավորվել բաց բաժնետիրական ընկերության,

- Կրել ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

## 4.ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

4.1. Կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող ընկերության գույքի նվազագույն չափը:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմված է բաժնետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից:

4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1 000 000 (մեկ միլիոն) դրամ, բաժանված 100 (մեկ հարյուր) հասարակ (սովորական) բաժնետոմսերի, յուրաքանչյուրը 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով:

Ընկերության բոլոր 100 բաժնետոմսերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքին:

4.3. Ընկերության կանոնադրական կապիտալի չափը կարող է մեծացվել բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացմամբ կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ:

Ընկերությունը կարող է որոշում ընդունել լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին միայն սույն կանոնադրությամբ սահմանված հայտարարված բաժնետոմսերի քանակի սահմաններում և միայն նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ վճարված լինելու դեպքում:

Եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի արժեքը լրիվ վճարված չէ, ապա Ընկերությունն իր կանոնադրական կապիտալը չի կարող մեծացնել ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին:

Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման և այն կանոնադրությունում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին որոշումներն ընդունվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

Ընկերությունը չի կարող բաժնետոմսեր թողարկել իր տնտեսական գործունեության ընթացքում առաջացած վնասները ծածկելու համար: Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը կարող է կատարվել բաժնետոմսերի անվանական արժեքի նվազեցմամբ կամ բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատմամբ, այդ թվում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով դրանց մի մասի ձեռք բերմամբ և մարմամբ:

Ընկերությունն իրավունք չունի նվազեցնել կանոնադրական կապիտալը, եթե դրա հետևանքով նրա չափը կդառնա ավելի փոքր օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված ընկերության կանոնադրական կապիտալի նվազագույն չափից:

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման և սույն կանոնադրությունում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին որոշումներ ընդունվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման մասին որոշումն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում Ընկերությունը գրավոր ծանուցում է այդ մասին իր պարտատերերին:

## 5. ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐ

5.1. Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել միայն սովորական բաժնետոմսեր, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված արժեթղթեր:

5.2. Ընկերության բաժնետոմսերը ոչ փաստաթղթային են:

5.3. Ընկերության լրացուցիչ տեղաբաշխված բաժնետոմսերը պետք է վճարվեն դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ, քան դրանց տեղաբաշխման պահից 1 տարվա ընթացքում:

Ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի դիմաց վճարումը կարող է իրականացվել դրամով, արժեթղթերով, այլ գույքով կամ գույքային իրավունքներով, ինչպես նաև դրամական գնահատում ունեցող այլ իրավունքներով:

Ընկերության բաժնետոմսերը և այլ արժեթղթերը, որոնց դիմաց վճարումը նախատեսված է ոչ դրամական միջոցներով, դրանց ձեռքբերման ժամանակ վճարվում են լրիվ արժեքով:

Ինչպես Ընկերության հիմնադրման, այնպես էլ բաժնետոմսերի լրացուցիչ տեղաբաշխման ժամանակ բաժնետոմսերի դիմաց վճարվող գույքի արժեքը սահմանվում է հիմնադրի կողմից և ենթակա է գնահատման անկախ գնահատողի կողմից:

Ընկերության տրամադրության տակ փոխանցված բաժնետոմսերը (չվճարված կամ հետ վերադարձված) չեն տալիս ձայնի իրավունք, հաշվի չեն առնվում ձայների հաշվարման ժամանակ, այդ բաժնետոմսերով շահութաբաժիններ չեն հաշվարկվում: Այդ բաժնետոմսերը պետք է իրացվեն Ընկերության կողմից՝ դրանք Ընկերությանը փոխանցելու պահից մեկ տարվա ժամկետում: Հակառակ դեպքում՝ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը պետք է որոշում ընդունի նշված բաժնետոմսերի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի փոփոխման մասին:

5.4. Ընկերությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի թողարկել և տեղաբաշխել պարտատոմսեր և այլ արժեթղթեր:

Պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկումն իրականացվում է Ընկերության բաժնետերերի ժողովի որոշմամբ:

Պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ սահմանվում են դրանց մարման ձևը, ժամկետները և պայմանները:

Պարտատոմսերը չեն կարող թողարկվել մինչև Ընկերության կանոնադրական կապիտալի լրիվ վճարումը:

Ընկերությունն իրավունք ունի թողարկել՝

ա/ Ընկերության գույքի գրավով ապահովված պարտատոմսեր,

բ/ երրորդ անձանց կողմից պարտատոմսերի թողարկման համար տրամադրված երաշխավորությամբ ապահովված պարտատոմսեր,

գ/ առանց ապահովման պարտատոմսեր:

Ընկերությունը կարող է թողարկել ինչպես անվանական, այնպես էլ ըստ ներկայացնողի պարտատոմսեր:

Ընկերությունը կարող է թողարկել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր, որոնք տալիս են Ընկերության պարտատոմսերը և այլ արժեթղթերը բաժնետոմսերի փոխարկման կամ բաժնետոմսերի արտոնյալ ձեռք բերման իրավունք:

5.5. Ընկերության շահույթից մասհանումների հաշվին ստեղծվում է պահուստային հիմնադրամ կանոնադրական կապիտալի 15% տոկոսի չափով: Ընկերության պահուստային հիմնադրամի ձևավորման կարգը սահմանվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

Եթե պահուստային հիմնադրամը կազմում է կանոնադրությամբ սահմանված չափից ավելի փոքր մեծություն, ապա հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթից առնվազն 5%

տոկոսի չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից:

Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

Շահաբաժնի ձևով չվճարված կամ այլ եղանակով չօգտագործված շահույթը տեղաբաշխվում է Ընկերության հայեցողությամբ:

5.6. Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերությունը կարող է ստեղծել նաև սպառման, սոցիալական, զարգացման և այլ հիմնադրամներ:

Ընկերության զուտ ակտիվների արժեքը գնահատվում է հաշվապահական հաշվեկշռի կամ աուդիտորական վերստուգման տվյալներով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 6.ԲԱԺՆԵՏԻՐՈՋ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1 Ընկերության յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքներ:

Հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող անձն իրավունք ունի՝

- մասնակցել Ընկերության ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,
- մասնակցել Ընկերության կառավարմանը,
- ստանալ շահութաբաժին Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,
- օրենքով նախատեսված դեպքերում առաջնահերթ կարգով ձեռք բերել ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը,
- ստանալ գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն կամ փաստաթուղթ, այդ թվում՝ հաշվապահական (ֆինանսական) փաստաթղթեր, հաշվետվություններ, հաշվապահական գրքեր, ծանոթանալ Ընկերության արտադրատնտեսական կամ այլ գործունեությանը, ուսումնասիրել այն անձամբ կամ դրա համար ներգրավել համապատասխան մասնագետներ (այդ թվում փորձագետներ),
- Ընկերության ընդհանուր ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի, դրանցում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերին համապատասխան ձայների չափով,
- Ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած Ընկերության գույքի իր հասանելիք մասը,
- առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը,
- օտարել կամ այլ ձևով այլ անձանց փոխանցել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսը,
- օգտվել օրենքով և Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

6.2. Բաժնետերը պարտավոր է չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկություններ:

## 7.ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Ընկերությունն իրավունք ունի որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց միջանկյալ (եռամսյակային, կիսամյակային) և (կամ) տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

Շահութաբաժինները վճարվում են Ընկերության զուտ շահույթից (կուտակված շահույթից):

Ինչպես տարեկան, այնպես էլ միջանկյալ շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունվում է Ընկերության կառավարման բարձրագույն մարմնի կողմից:

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը իրավունք ունի որոշում ընդունել շահութաբաժիններ չվճարելու կամ ոչ լրիվ չափով վճարելու մասին: Այդ որոշումների գործունեության ժամկետը սահմանվում է Ընկերության կառավարման բարձրագույն մարմնի կողմից, բայց չի կարող մեկ տարուց ավելի լինել:

Շահութաբաժինների վճարման ամսաթիվը սահմանվում է Ընկերության կառավարման բարձրագույն մարմնի՝ շահութաբաժինների վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր անց:

7.2. Ընկերությունն իրավունք չունի շահութաբաժիններ հայտարարել և վճարել, եթե՝

- լրիվ չի վճարվել Ընկերության կանոնադրական կապիտալը,

-շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Ընկերության տնտեսական վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկացման) հայտանիշներին, կամ նշված հայտանիշներն ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով,

- Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է Ընկերության կանոնադրական կապիտալից, կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով:

## 8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

8.1. Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է, որի լիազորություններն իրականացնում է Աշտարակ համայնքի ղեկավարը:

Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի ընդհանուր ժողով՝ բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովը գումարվում է հերթական ֆինանսական տարվա ավարտից 2 ամիս հետո՝ 3 ամսվա ընթացքում:

Բաժնետերերի տարեկան ժողովից բացի գումարվող Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ: Ընկերության արտահերթ ժողովներ գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

Ընկերության բաժնետերերի ինչպես տարեկան, այնպես էլ արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են Աշտարակ համայնքի ղեկավարի կողմից, ով որոշում է

- Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, տեղը և ժամանակը,

- Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգը:

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովներում նախագահում է Աշտարակ համայնքի ղեկավարը կամ նրա կողմից լիազորված անձը:

8.2. «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ընկերությունում խորհուրդ չի ստեղծվում և նրա իրավասությանը ենթակա հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունում է բաժնետերերի ընդհանուր ժողովը:

8.3. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում՝

1. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,

2. Ընկերության վերակազմակերպումը,

3. Ընկերության լուծարումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը, ամփոփ, միջանկյալ և լուծարային հաշվեկշիռների հաստատումը,

4. Հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,

5. Բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի չափի ավելացումը,

6. Բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,

7. Ընկերության տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

8. Ընկերության վերստուգողի ընտրությունը /նշանակումը/ և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

9. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

10. Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշիվների հաստատումը, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և շահութաբաժինների չափի հաստատումը,

11. Բաժնետոմսերի բաժանումը (տարանջատումը) և համախմբումը (կոնսոլիդացիան),

12. Օրենքով նախատեսված դեպքերում գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը,

13. Օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը,

14. Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց աուդիտն իրականացնող անձի աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը, ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների սահմանումը,

15. Ընկերության կողմից դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը,

16. Ընկերության կողմից դուստր կամ կախյալ ընկերություններում մասնակցությունը,

17. Հոլդինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների, այլ միությունների հիմնադրումը,

18. Հոլդինգային ընկերություններում, առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցությունը,

19. Այլ հարցեր, որոնք օրենքով և սույն կանոնադրության համաձայն սահմանված են որպես բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասության հարցեր:

8.4. Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող, ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ (այլ բաժնետերեր լինելու դեպքում), բացի 8.5 կետում սահմանված դեպքերից:

8.5. Սույն կանոնադրության 8.3. կետի 1, 2, 3, 4,. 6, 12 ենթակետերով սահմանված հարցերի մասին որոշումներն ընդունվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ժողովին մասնակցող, քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների երեք քառորդով, ընդ որում 3 և 6 ենթակետերով սահմանված դեպքերում կողմ ձայների քանակը չպետք է պակաս լինի քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների երկու երրորդից:

8.6. Ընկերությունում Աշտարակ համայնքից բացի այլ բաժնետեր չլինելու դեպքում օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանը վերապահված հարցերով որոշում կայացնում է Աշտարակ համայնքի ղեկավարը: Ընկերության վերակազմակերպման, լուծարման, կանոնադրական կապիտալի նվազեցման հարցերի վերաբերյալ, ինչպես նաև օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ դեպքերում Աշտարակ համայնքի ղեկավարը որոշումներ կայացնում է միայն Աշտարակ համայնքի ավագանու համապատասխան որոշման առկայության դեպքում:

8.7. Ընկերության տնօրենը, ինչպես նաև վերստուգող հանձնաժողովի անդամները և աուդիտն իրականացնող անձը Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով:

8.8. Ընկերության տնօրենը՝

1. Տնօրինում է ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից,

2. Ներկայացնում է Ընկերությանը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում,

3. Գործում է առանց լիազորագրի,

4. Տալիս է լիազորագրեր,

5. Սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում նաև աշխատանքային: Ընդ որում՝ գրավի, փոխառության կամ վարկային պայմանագրեր կարող են կնքվել բացառապես Ընկերության ընդհանուր ժողովի՝ ի դեմս Աշտարակ համայնքի ղեկավարի համաձայնությամբ:

Ընկերության վարձու աշխատողների նկատմամբ իրականացնելով գործատուի լիազորություններ,

6. Բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթի) և այլ հաշիվներ,

7. Առաջարկություններ է նախապատրաստում Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ,

8. Ընկերության ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները, Ընկերության վարչակազմակերպման կառուցվածքը և հաստիքացուցակը:

9. Իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը:

10. Սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին:

11. Աշխատակցի նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

12. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերության գործադիր մարմնի (ինչպես միանձնյա, այնպես էլ կոլեգիալ) լիազորությունները պայմանագրով կարող են տրվել այլ առևտրային կազմակերպության կամ ձեռնարկատիրոջ (կառավարչին):

## 9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

9.1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն ընտրում է /նշանակում է/ Ընկերության վերստուգող: Ընկերությունում այլ բաժնետերեր չլինելու դեպքում վերստուգողին նշանակում է Աշտարակ համայնքի ղեկավարը:

Վերստուգողը հետևում է Ընկերության կառավարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունը օրենքներին, այլ իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը:

Վերստուգողի գործունեության կարգը սահմանվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատվող կանոնակարգով:

Վերստուգողը իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ:

Վերսստուգողը ստուգումների արդյունքները ներկայացնում է Ընկերության բաժնետերերին և ընդհանուր ժողովին: Վերստուգողն ըստ տարեկան հաշվետվության և հաշվեկշռի կազմում է

եզրակացություն: Առանց այդ եզրակացության Ընկերության հաշվեկշիռը ենթակա չէ հաստատման ընդհանուր ժողովի կողմից:

Վերստուգողն իրավունք ունի պահանջել Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի գումարում:

Վերստուգողի պահանջով նրան պետք է ներկայացվեն Ընկերության, դրա առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:

Վերստուգողը հաշվետու է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին:

Վերստուգողի վարձատրության և /կամ/ վճարվող փոխհատուցման չափերը, պայմանները սահմանվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ:

Վերստուգողը կարող է լինել Ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված, բաժնետիրոջ կողմից նշանակված ցանկացած ֆիզիկական անձ:

9.2 Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը կարող է ներգրավել Ընկերության կամ լիազորված մարմնի հետ գույքային շահերով չկապված աուդիտորի (կազմակերպություն կամ ֆիզիկական անձ): Ընկերության աուդիտն իրականացնող անձն Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման արդյունքում ներկայացնում է գրավոր եզրակացություն:

Ընկերության աուդիտն իրականացնող անձը հաստատվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից: Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ պայմանագիրը կնքվում է Ընկերության տնօրենի կողմից, իսկ աուդիտն իրականացնող անձի ծառայությունների համար վճարը որոշում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

## 10.ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

10.1 Հայաստանի Հանրապետության տարածքում և նրանից դուրս Ընկերությունը չունի մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

## 11. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

11.1. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, ինչպես նաև Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատելը տեղի է ունենում Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ընդունվում է ժողովին մասնակցած քվեարկող բաժնետերերի ձայների 3/4-ով, իսկ կանոնադրական կապիտալի չափի մեծացման հետ կապված դեպքերում ձայների մեծամասնությամբ (այլ բաժնետերեր լինելու դեպքում):

11.2. Մասնաճյուղի և (կամ ) ներկայացուցչության ստեղծման կամ գործունեության դադարեցման հետ կապված տեղեկությունները մտցվում են Ընկերության կանոնադրության մեջ: Այդ տեղեկությունների փոփոխությունների հետ կապված կանոնադրության փոփոխությունները ուժի մեջ են մտնում պետական գրացումն իրականացնող մարմիններին ծանուցելու պահից:

11.3 Ընկերության կանոնադրության մեջ կատարված փոփոխությունները և լրացումները, ինչպես նաև Ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրությունը երրորդ անձանց համար ուժի մեջ են մտնում դրանց պետական գրանցման պահից, իսկ սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերում պետական գրանցումն իրականացնող մարմնին ծանուցելու պահից: Սակայն Ընկերությունը և նրա բաժնետերերը նման փոփոխությունները հաշվի առած երրորդ անձանց հետ ունեցած հարաբերություններում իրավունք չունեն վկայակոչել այդ փոփոխությունների գրանցման բացակայությունը:

## 12. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

12.1. Ընկերությունը բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, կարող է կամովին վերակազմակերպվել կամ լուծարվել:

Եթե լուծարվող Ընկերության գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով:

Ընկերության վերակազմակերպման և լուծարման այլ հիմքերը, ինչպես նաև նրա վերակազմակերպման ու լուծարման կարգը սահմանվում են Օրենսգրքով, Օրենքով և այլ օրենքներով:

12.2 Ընկերությունը կարող է վերակազմակերպվել Օրենքով սահմանված կարգով՝ միաձուլման, միացման, բաժանման առանձացման և վերակազմավորման միջոցով:

12.3. Ընկերության լուծարման և լուծարային հանձնաժողովի ստեղծման մասին որոշումը կայացնում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ քվեարկությամբ, բաժնետոմսերի սեփականատերերի ձայների ոչ պակաս 2/ 3-ով (այլ բաժնետերեր լինելու դեպքում):

Լուծարային հանձնաժողովի կազմում պետք է ընգրկվեն լիազորված մարմնի ներկայացուցիչներ:

Լուծարման հանձնաժողով կազմելու պահից նրան են անցնում Ընկերության գործերի կառավարման բոլոր լիազորությունները: Լուծարվող Ընկերության անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը:

Նախքան լուծարման մասին որոշում ընդունելը Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը պետք է հաստատի տնօրենի կողմից ներկայացված ամփոփիչ հաշվեկշիռն ու Ընկերության լուծարման նախագիծը:

Ընկերության լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները (այդ թվում լուծարման հանձնաժողովի կազմը) ենթակա են գրանցման իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում:

Լուծարումն իրականացվում է Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

12.4. Ընկերությունը, բացառությամբ այլ իրավաբանական անձի հետ միացման ձևով վերակազմակերպման դեպքի, վերակազմակերպված է համարվում նոր ստեղծվող իրավաբանական անձանց պետական գրանցման պահից:

Ընկերությունն այլ իրավաբանական անձի հետ միացման ձևով վերակազմակեպվելիս, նրանք վերակազմակեպված են համարվում միացող ընկերության գործունեությունը դադարելու վերաբերյալ իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում գրառման պահից:

12.5. Ընկերության լուծարումը համարվում է ավարտված, իսկ նրա գոյությունը դադարած՝ այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու պահից:

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ**

*Հավելված 2*
*Հաստատված է համայնքի ավագանու*
*12.09.2023թ.  N 116-Ա որոշմամբ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՇՏԱՐԱԿՏՐԱՆՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ**

Աշխատակիցների թվաքանակը՝ **29**

| N | Հաստիքացուցակ | Հաստիքային միավորը | 1 միավորի դրույքաչափը /դրամ/ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 300000 | 300000 |
| 2 | Հավաքակայանի պատասխանատու | 1 | 250000 | 250000 |
| 3 | Գնումների գծով մասնագետ | 1 | 150000 | 150000 |
| 4 | Մատակարար - պահեստապետ | 1 | 200000 | 200000 |
| 5 | Գործավար - համակարգչային օպերատոր | 1 | 125000 | 125000 |
| 6 | Մեխանիկ | 2 | 180000 | 360000 |
| 7 | Ավտոէլեկտրիկ | 1 | 150000 | 150000 |
| 8 | Հասույթի գանձապահ | 1 | 180000 | 180000 |
| 9 | Ավտոբուսի վարորդ | 20 | 300000 | 6000000 |
|  | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **29** | **1835000** | **7715000** |

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*12-ը սեպտեմբերի 2023թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24.12.2021Թ. N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Արձ.- 30*

*/Զեկուցող՝ Մ. ՍԱՀԱԿՅԱՆ/*

**N 117 - Ա ՈՐՈՇՈՒՄ**

*Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33, 34 հոդվածների պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1.Աշտարակ համայնքի ավագանու 24.12.2021թ. N 10-Ա որոշման Հավելված 2-ի մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ՝

- <<Աշխատակիցների թվաքանակը՝ 239>>-ը փոխարինել <<Աշխատակիցների թվաքանակը՝ 240>> բառերով,

3-րդ մասը լրացնել հետևյալ տողով՝

| | | | | |
|---|---|---|---|---|
| 25 | Վարորդ /ներհամայնքային ավտոբուսի/ | 1 | 260000 | 260000 |

3-րդ մասի

| | | | |
|---|---|---|---|
| **Ընդամենը** | **81,5** | | **16 820 000** |

տողը փոխարինել հետևյալ տողով՝

| | | | |
|---|---|---|---|
| **Ընդամենը** | **82,5** | | **17 080 000** |

4-րդ մասի

| | | | |
|---|---|---|---|
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **238,5** | | **55 099 000** |

տողը փոխարինել հետևյալ տողով՝

| | | | |
|---|---|---|---|
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **239,5** | | **55 359 000** |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

<u>**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**</u>

*ԿՈՂՄ - 18* *ԴԵՄ- 0* *ՁԵՌՆՊԱՀ – 0*

| | |
|---|---|
| ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ | ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ |
| ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ | ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ |
| ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ | ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ |
| ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ |
| ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ | ԱԶԱՏ ՋԱՔԱՐՅԱՆ |
| ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ | ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ |
| ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ |

*Տ. Գալստյանը, Ս. Օվոյանը և Ա. Շմավոնյանը չեն մասնակցել քվեարկությանը:*

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*12-ը սեպտեմբերի 2023թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 09.12.2022Թ. N 178-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 30*

*/Զեկուցող՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ/*

***N 118 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33, 34 հոդվածների պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Աշտարակ համայնքի ավագանու 09.12.2022թ. N 178-Ա որոշման հավելված 37-ը շարադրել նոր խմբագրությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 18* *ԴԵՄ- 0* *ՁԵՌՆՊԱՀ – 0*

| | |
|---|---|
| ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ | ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ |
| ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ | ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ |
| ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ | ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ |
| ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ |
| ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ | ԱԶԱՏ ՁԱՔԱՐՅԱՆ |
| ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ | ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ |
| ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ |
| ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ | ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ |

*Տ. Գալստյանը, Ս. Օվոյանը և Ա. Շմավոնյանը չեն մասնակցել քվեարկությանը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

**Հավելված 37** **<<Բարեկարգում>> ՀՈԱԿ**

Աշխատակիցների թվաքանակը՝ 64

| N | Հաստիքացուցակ | Հաստիքային միավորը | 1 միավորի դրույքաչափը /դրամ/ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 450000 | 450000 |
| 2 | Տնօրենի տեղակալ-մենեջեր | 1 | 400000 | 400000 |
| 3 | Ինժեներ | 1 | 180000 | 180000 |
| 4 | Վարորդ-կոյուղագործ | 1 | 150000 | 150000 |
| 5 | Վարորդ-ամբարձիչի | 6 | 280000 | 1680000 |
| 6 | Վարորդ բեռնատարի | 5 | 250000 | 1250000 |
| 7 | Լուսավորության համակարգի պատասխանատու | 8 | 170000 | 1360000 |
| 8 | Ջրդող | 2 | 200000 | 400000 |
| 9 | Տարաբանվոր | 30 | 220000 | 6600000 |
| 10 | Ջրսայգու անվտանգության աշխատակից | 2 | 150000 | 300000 |
| 11 | Այգեպան | 2 | 170000 | 340000 |
| 12 | Անձնագրավար | 1 | 140000 | 140000 |
| 13 | Կադրերի պատասխանատու-իրավաբան | 1 | 210000 | 210000 |
| 14 | Դենդրոլոգ | 1 | 260000 | 260000 |
| 15 | Գործավար | 1 | 140000 | 140000 |
| 16 | Մեխանիզատոր | 1 | 400000 | 400000 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **64** | **3770000** | **14260000** |

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ** **Ս. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*12-ը սեպտեմբերի 2023թ.*

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐԸ <<ԱՆՈՒՇԱՎԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ՊՈՂՈՍԻ>> ԱՁ-ԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 30*

*/Զեկուցող՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ/*

**N 119 - Ա ՈՐՈՇՈՒՄ**

*Հիմք ընդունելով <<Անուշավան Գաբրիելյան Պողոսի>> ԱՁ-ի 26.07.2023թ. թիվ 7621 դիմումը՝ ինտերնետային մալուխների անցկացման նպատակով համայնքային սեփականություն հանդիսացող հենասյուներն օգտագործելու վերաբերյալ, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Համաձայնություն տալ Աշտարակ համայնքում <<Անուշավան Գաբրիելյան Պողոսի>> ԱՁ-ի կողմից ինտերնետային մալուխների անցկացման համար համայնքային սեփականություն հանդիսացող հենասյուները, ամսական մեկ հենասյան համար 500 /հինգ հարյուր/ ՀՀ դրամ վարձավճարով <<Անուշավան Գաբրիելյան Պողոսի>> ԱՁ-ին վարձակալության տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 19* *ԴԵՄ- 0* *ՁԵՌՆՊԱՀ – 0*

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ
ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ
ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ
ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*Ս. Օվոյանը և Ա. Շմավոնյանը չեն մասնակցել քվեարկությանը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*12-ը սեպտեմբերի 2023թ.*

## ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 30*

*/Զեկուցող՝ Շ. ՔՈԹԱՆՅԱՆ/*

***Ν 120 - Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով <<Միավորող կամուրջ>> սոցիալական ՀԿ-ի նախագահ Ռազմիկ Մնացականյանի 30.08.2023թ. թիվ 8759 դիմումը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Համաձայնություն տալ Աշտարակի համայնքապետարանի ենթակայության Օշականի մշակույթի տան շենքից 2 /երկու/ սենյակ /առաջին հարկում փոքր սենյակ /21.92քմ/ գրասենյակային նպատակներով և երկրորդ հարկում մեծ սենյակ /92.25քմ/ հանդիպումների, դասընթացների իրականացման համար/, անորոշ ժամկետով <<Միավորող կամուրջ>> սոցիալական ՀԿ-ին անհատույց օգտագործման տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2.Սույն որոշումից բխող հետագա ակտերի ընդունումը վերապահել Աշտարակ համայնքի ղեկավարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 19* *ԴԵՄ- 1* *ՁԵՌՆՊԱՀ – 0*

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ
ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ
ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ
ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՅԱՆ

*Ա. Շմավոնյանը չի մասնակցել քվեարկությանը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

***12-ը սեպտեմբերի 2023թ.***

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Արձ.- 30***

***N 121 - Ն ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետի և 35-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հաստատել «Համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը»՝ համաձայն հավելված N 1-ի:

2. Հաստատել համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմնի անդամության դիմումի ձևը՝ համաձայն հավելված N 2-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 19* *ԴԵՄ - 1* *ՁԵՌՆՊԱՀ – 0*

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ
ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ
ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ
ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ
ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
ԱԶԱՏ ՉԱՔԱՐՅԱՆ
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՅԱՆ

*Ա. Շմավոնյանը չի մասնակցել քվեարկությանը:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

*Հավելված N 1*

*Աշտարակ համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 12-ի N 121-Ն որոշման*

# Կ Ա Ր Գ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմնի (այսուհետ՝ ԿԵԽՄ-ի) ձևավորման, գործունեության և այդ մարմնին անդամակցելու հետ կապված հարաբերությունները և հիմնական պահանջները:

2. Սույն կարգը նպատակ ունի սահմանելու համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող ԿԵԽՄ-ի ձևավորման և գործունեության հստակ, արդյունավետ գործիքակազմեր՝ ապահովելով փոխադարձ կապն ու համագործակցությունը, մի կողմից, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների և, մյուս կողմից, համայնքում քաղաքականություն մշակող և որոշում ընդունող տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ-եր) միջև:

3. Սույն կարգի խնդիրներն են.

1) սահմանել ԿԵԽՄ-ի գործունեության նպատակները, խնդիրները և գործառույթները.
2) սահմանել ԿԵԽՄ-ի ձևավորման, անդամների ընտրության մոտեցումները և գործունեության կարգը.
3) ամրագրել ԿԵԽՄ-ի գործունեությանն առնչվող կողմերի դերերը և գործառույթները.
4) սահմանել այլ մարմինների հետ ԿԵԽՄ-ի հարաբերությունները.
5) սահմանել ԿԵԽՄ-ի գործունեության դադարեցման, ինչպես նաև սույն կարգում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու վերաբերյալ կարգավորումները:

## 2. ԿԵԽՄ-Ի ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. ԿԵԽՄ-ը համայնքի ղեկավարին կից, հասարակական կարգով գործող մարմին է, որի միջոցով ապահովվում է համայնքի բնակիչների կին ներկայացուցիչների և երիտասարդների մասնակցությունը համայնքի տեղական ինքնակառավարմանը և համայնքային խնդիրների լուծմանը: ԿԵԽՄ-ը, որպես քաղաքացիական հասարակության միավորված խումբ՝ համայնքային նշանակության հանրային հարցերի շուրջ կարող է խորհրդատվություն, եզրակացություններ և առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին՝ այդպիսով ակտիվ մասնակցություն ունենալով համայնքում տեղական

ինքնակառավարմանը վերաբերող քաղաքականությունների մշակման, որոշումների ընդունման և դրանց իրականացման արդյունքների մոնիթորինգի և գնահատման գործընթացներին:

5. ԿԵԽՄ-ի գործունեության նպատակն է՝ նպաստել համայնքում տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացմանը, համայնքային նշանակության հանրային խնդիրների լուծմանը՝ ապահովելով համայնքի քաղաքացիական ակտիվություն ցուցաբերող կանանց և երիտասարդների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը:

6. ԿԵԽՄ-ի խնդիրներն են.

1) մասնակցել համայնքի տեղական ինքնակառավարմանը և համայնքի գործերի կառավարմանը.
2) տրամադրել խորհրդատվություն համայնքի ղեկավարին՝ համայնքի խնդիրների լուծման, համայնքի զարգացման ուղղությունների սահմանման, համայնքի կանանց և երիտասարդությանը վերաբերող ծրագրերի իրագործման և այլնի վերաբերյալ.
3) ապահովել տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության մասնակցությունն ու նրանց ձայնի հասանելիությունը համայնքի ՏԻՄ-երին.

## 3. ԿԵԽՄ-Ի ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. ԿԵԽՄ-ի գործառույթներն են.

1) ապահովել համայնքի բնակիչների իրազեկությունը ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ.
2) աջակցել և մասնակցել համայնքի զարգացման հնգամյա ծրագրի, համայնքի տարեկան բյուջեի, համայնքի տարեկան աշխատանքային պլանի և այլ ծրագրային փաստաթղթերի մշակման, քննարկման, իրականացմանը.
3) առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին համայնքին կառավարմանը առնչվող և տեղական ինքնակառավարման օրենսդրությամբ համայնքի ղեկավարի համար սահմանված ըստ բնագավառների լիազորությունների իրականացմանը առնչվող կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի վերաբերյալ.
4) բացահայտել համայնքի կին բնակիչների և երիտասարդությանը վերաբերող հանրային կարևորություն և հնչեղություն ունեցող հարցերն ու խնդիրները և դրանց վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին.
5) ուսումնասիրել և քննարկել համայնքի բնակիչների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից բարձրացված հարցերը և դրանց վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին.
6) իրականացնել հանրային մշտադիտարկում համայնքի ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ.
7) ապահովել հարթակ,մի կողմից, համայնքի ղեկավարի, համայնքի աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների համար և, մյուս

կողմից,համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև կապի և երկխոսության համար.

8) հետևել ԿԵԽՄ-ի կողմից համայնքի ղեկավարին ներկայացված առաջարկությունների ընդունման և կատարման աշխատանքների ընթացքին, չընդունվելու դեպքում՝ բացահայտել մերժման պատճառները և հիմնավորումները.

9) աջակցել և խորհրդատվություններ տրամադրել ԿԵԽՄ-ի կողմից ընդունելի՝ համայնքի ՏԻՄ-երին օրենսդրությամբ վերապահված այլ լիազորությունների իրականացմանն աջակցող այլ գործառույթներ և այլն:

## 4. ԿԵԽՄ-Ի ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

9.ԿԵԽՄ-ի կազմը և ձևավորումը իրականացվում է ստորև սահմանված կարգով.

1) ԿԵԽՄ-ին կարող են անդամակցել համայնքի 16 տարին լրացած բնակիչները.

2) ԿԵԽՄ-ը կարող են ունենալ առավելագույնը մինչև 50 անդամ.

3) ԿԵԽՄ-ը ձևավորված են համարվում, եթե նշանակված է տվյալ ԽՄ-ի առնվազն 10 անդամ.

4)ԿԵԽՄ-ն ունի նախագահ և քարտուղար: Նախագահը և քարտուղարը ԿԵԽՄ-ի անդամ չեն համարվում:

10.ԿԵԽՄ-ի կազմում, իրենց համաձայնությամբ, կարող են ներգրավվել.

1) համայնքում իրականացվող տեղական ինքնակառավարման գործընթացներով հետաքրքրված կին բնակիչները.
2) համայնքի երիտասարդության ներկայացուցիչները"
3) համայնքի ավագանու անդամներ.
4) համայնքային հայեցողական կամ վարչական պաշտոններ զբաղեցնող անձինք"
5) համայնքի աշխատակազմի կամ համայնքային ենթակայության կազմակերպությունների համայնքային ծառայողներ և մասնագետներ.
6) քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և խմբերի ներկայացուցիչներ.
7) տարածքային կառավարման և պետական կառավարման մարմինների՝ համայնքի տարածքում գործող տարածքային ծառայությունների կամ ստորաբաժանումների ներկայացուցիչներ.
8) տեղական ինքնակառավարման հարցերով և այլ ոլորտային փորձագետներ.
9) այլ շահագրգիռ անձիք:

11.ԿԵԽՄ-ի կազմում՝ յուրաքանչյուր կազմակերպությունից կամ խմբերից կարող է ներգրավվել մեկ անդամ:

12.ԿԵԽՄ-ը ձևավորվում են սույն կարգն ընդունելու վերաբերյալ ավագանու որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո երեք ամսվա ընթացքում:

13.ԿԵԽՄ-ը իր գործունեությունը իրականացնում է մինչև գործող համայնքի ղեկավարի լիազորությունների ժամկետի ավարտը, կամ եթե վաղաժամկետ դադարել, դադարեցվել է վերջինիս լիազորությունները:

14.Նորընտիր համայնքի ղեկավարն իր լիազորությունները ստանձնելուց հետո երեք ամսվա ընթացքում ձևավորում է նոր կազմով ԿԵԽՄ-ն:

15.ԿԵԽՄ-ի անդամ չեն կարող լինել.

1) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք.
2) հանցագործության համար դատապարտված անձինք, ովքեր իրենց պատիժը կրում են քրեակատարողական հիմնարկներում.
3) զինված ուժերի ժամկետային զինծառայողները:

16.ԿԵԽՄ-ի անդամների նշանակումը կատարվում է հետևյալ կարգով.

1) ԿԵԽՄ-ի անդամներին նշանակում է համայնքի ղեկավարի համապատասխան առաջարկության ներկայացմամբ, հաստատում է համայնքի ավագանին՝ համապատասխան որոշմամբ.

2) ԿԵԽՄ-ի անդամները նշանակվում են մինչև համայնքի ղեկավարի լիազորությունների ժամկետի ավարտը.

3) համայնքի նորընտիր ղեկավարը, նոր կազմով ԿԵԽՄ-ն ձևավորելիս,կարող է վերանշանակել ԿԵԽՄ-ի անդամներին՝ վերջիններիս համաձայնությամբ:

17. ԿԵԽՄ-ի անդամների թեկնածուների առաջադրումը կատարվում է հետևյալ կարգով.

1) համայնքի ավագանու անդամի թեկնածուին առաջադրում է համայնքի ավագանին՝ իր որոշմամբ (թեկնածուի համաձայնությամբ).
2) համայնքային հայեցողական կամ վարչական պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձանց, համայնքի աշխատակազմի և (կամ) համայնքային ենթակայության կազմակերպությունների համայնքային ծառայողի կամ մասնագետի թեկնածուին առաջադրում է համայնքի ղեկավարը (թեկնածուի համաձայնությամբ).
3) ԿԵԽՄ-ի մյուս անդամների թեկնածուներին առաջադրում է ԽՄ-ի անդամների ընտրության նպատակով համայնքի ղեկավարի կողմից ձևավորված հանձնաժողովը՝ դիմում ներկայացրած անձանց կազմից:

18.ԿԵԽՄ-ի անդամների (բացառությամբ համայնքի ավագանու անդամի, համայնքային հայեցողական և վարչական պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձանց և համայնքի աշխատակազմի և (կամ) համայնքային ենթակայության կազմակերպությունների համայնքային ծառայողի կամ մասնագետի) թեկնածուների ընտրությունը կատարվում է դիմումներ ներկայացրած անձանց կազմից: Հայտարարությունը տրվում է սույն կարգն ընդունելու վերաբերյալ ավագանու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում: Համայնքի պաշտոնական ինտերնետային (համացանցային) կայքի առկայության դեպքում հայտարարությունը պարտադիր կերպով տեղադրվում է այդ կայքում, ինչպես նաև կարող է տարածվել տեղական զանգվածային լրատվության միջոցներով, տեղական հեռուստատեսությամբ և ժամանակակից հեռահաղորդակցության այլ միջոցներով (հեռախոսազանգերով, կարճ (SMS) հաղորդագրություններով և այլն): Հայտարարության մեջ նշվում է, ԿԵԽՄ-ին անդամակցելու համար հրավերը, հայտերի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները: ԿԵԽՄ-ին անդամակցելու դիմումի ձևը սահմանված է սույն որոշման հավելված 2-ում:

19. ԿԵԽՄ-ի անդամների (բացառությամբ համայնքի ավագանու անդամի, համայնքային հայեցողական և վարչական պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձանց և համայնքի աշխատակազմի և (կամ) համայնքային ենթակայության կազմակերպությունների համայնքային ծառայողի կամ մասնագետի) թեկնածուների ընտրության նպատակով հանձնաժողովի կողմից անց է կացվում հարցազրույց: Հանձնաժողովը նախագահում է համայնքի ղեկավարը կամ վերջինիս լիազորած անձը: Հանձնաժողովի կազմում կարող են ներգրավվել համայնքի աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Հանձնաժողովը կարող է ունենալ երեք անդամ՝ ներառյալ նախագահը:

20.ԿԵԽՄ-ի անդամների (բացառությամբ համայնքի ավագանու անդամի, համայնքային հայեցողական և վարչական պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձնաց և համայնքի աշխատակազմի և (կամ) համայնքային ենթակայության կազմակերպությունների համայնքային ծառայողի կամ մասնագետի) թեկնածուների ընտրության ժամանակ կարող են հաշվի առնվել հետևյալ չափանիշները.

1) թեկնածուի կրթական ցենզը.
2) համայնքի բնակչության տարբեր խմբեր ներկայացնող անձանց, մասնավորապես՝ կանանց և երիտասարդների ներկայացուցչության ապահովումը.
3) հասարակական հիմունքներով կամ կամավորության սկզբունքով աշխատանքներ կատարելու նախկին փորձը.
4) բազմաբնակավայր համայնքի դեպքում՝ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի ներկայացուցչության ապահովումը.
5) հարցազրույցի արդյունքները:

21.ԿԵԽՄ-ին անդամագրվելու դիմում ներկայացրած այն անձինք, ովքեր չեն ընտրվել և չեն նշանակվել որպես ԿԵԽՄ-ի անդամ, համայնքի աշխատակազմի կողմից գրանցվում են դիմում ներկայացրած անձանց ռեզերվում:

22. ԿԵԽՄ-ի անդամների գործունեությունը այն իրականացնելու ընթացքում հնարավոր է դադարեցվեն:

23. ԿԵԽՄ-ի անդամի գործունեությունը դադարեցվում է համայնքի ղեկավարի առաջարկության ներկայացմամբ, համայնքի ավագանու որոշմամբ, եթե ԿԵԽՄ-ի անդամը.

1) դիմում է ներկայացրել ԿԵԽՄ-ի կազմից դուրս գալու վերաբերյալ.
2) երեք անգամ անընդմեջ, անհարգելի պատճառով չի մասնակցել ԽՄ-ի նիստերի աշխատանքին.
3) սույն կարգի 15-րդ կետով սահմանված դեպքերի առաջացման պայմաններում"
4) մահացել է:

24. Եթե ԿԵԽՄ-ի անդամի գործունեության դադարեցման հետևանքով ԿԵԽՄ-ի անդամների թիվը նվազել է տասից, ապա համայնքի ղեկավարի առաջարկության ներկայացմամբ, համայնքի ավագանին 15 օրվա ընթացքում նշանակում է նոր անդամ՝ դիմում ներկայացրած անձանց ռեզերվից կամ, եթե դա հնարավոր չէ, ապա 15 օրվա ընթացքում նոր տրված հայտարարության հիման վրա դիմում ներկայացրած անձանց կազմից:

25.Եթե ԿԵԽՄ-ի անդամ հանդիսացող ավագանու ներկայացուցիչը կամ համայնքի աշխատակազմի կամ համայնքային ենթակայության կազմակերպությունների ներկայացուցիչը դադարեցնում է գործունեությունն իր պաշտոնում, նա կարող է շարունակել անդամակցել ԽՄ-ին:

26.ԿԵԽՄ-ի նախագահը՝ համայնքի ղեկավարն է: Համայնքի ղեկավարի բացակայության ժամանակ, ԽՄ-ի նախագահի գործառույթներն իրականացնում է համայնքի ղեկավարի տեղակալը կամ համայնքի ղեկավարի կողմից լիազորված անձը:

27.ԿԵԽՄ-ի քարտուղարը համայնքի աշխատակազմի քարտուղարն է կամ նրա կողմից նշանակված համայնքի աշխատակազմի ներկայացուցիչը:

## 5. ԿԵԽՄ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ԿԵԽՄ-ի գործունեության բնագավառներն են՝

28.ԿԵԽՄ-ի անդամներն իրենց գործունեությունն իրականացնում են անձամբ՝ հասարակական հիմունքներով:

29.ԿԵԽՄ-ի գործունեության տեղեկատվական և մասնագիտական ապահովումը կազմակերպում է համայնքի աշխատակազմի քարտուղարը՝ անհրաժեշտության դեպքում, աշխատակազմի բաժինների և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ներգրավմամբ և մասնակցությամբ:

30.ԿԵԽՄ-ի նիստերը գումարվում են՝

1) առնվազն երեք ամիսը մեկ անգամ.

2) անհրաժեշտության դեպքում՝ ԿԵԽՄ-ի անդամների նախաձեռնությամբ և համայնքի ղեկավարի համաձայնությամբ, կարող են հրավիրվել արտահերթ նիստեր:

31. ԿԵԽՄ-ի նիստերը հրավիրում և վարում է ԿԵԽՄ-ի նախագահը:

32. ԿԵԽՄ-ի նիստի ամսաթիվը որոշում է ԿԵԽՄ-ի նախագահը:

33. ԿԵԽՄ-ի առաջին նիստը գումարվում է ԿԵԽՄ-ի անդամներին նշանակելու մասին համայնքի ղեկավարի որոշումն ընդունելուց հետո 20 օրվա ընթացքում:

34. ԿԵԽՄ-ի նիստերը կազմակերպվում և անց են կացվում համայնքի ՏԻՄ-երի նստավայրում կամ համայնքի ղեկավարի որոշմամբ մեկ այլ վայրում՝ արտագնա նիստ գումարելու միջոցով:

35. ԿԵԽՄ-ի նիստի վայրը, ամսաթիվը և քննարկման ենթակա հարցերի օրակարգը հրապարակվում են նիստից առնվազն երկու աշխատանքային օր առաջ: Նշյալ տեղեկատվությունը փակցվում է ՏԻՄ-երի նստավայրում, ինչպես նաև այն վայրերում, որոնք հասանելի են համայնքի յուրաքանչյուր մասի բնակչի համար՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:

36. Համայնքի պաշտոնական համացանցային կայքի առկայության դեպքում,վերոնշյալ տեղեկատվությունը պարտադիր կերպով տեղադրվում է այդ կայքում, ինչպես նաև կարող է տարածվել տեղական զանգվածային լրատվության միջոցներով, տեղական հեռուստատեսությամբ և ժամանակակից հեռահաղորդակցության այլ միջոցներով (հեռախոսազանգերով, կարճ (SMS) հաղորդագրություններով և այլն):

37.ԿԵԽՄ-ի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են ԿԵԽՄ-ի անդամների թվի կեսից ավելին:

38. Եթե կես ժամվա ընթացքում չի ապահովվում տվյալ նիստի իրավազորությունը, կամ նիստին չի ներկայանում ԿԵԽՄ-ի նախագահը և նիստը չի սկսվում, ապա նիստի չկայացման մասին կազմվում է արձանագրություն, որն ստորագրում են ԿԵԽՄ-ի՝ նիստին ներկայացած անդամները:

39. ԿԵԽՄ-ի նիստը տևական է և շարունակվում է մինչև օրակարգի սպառումը:

40.ԿԵԽՄ-ի նիստն արձանագրվում է ԿԵԽՄ-ի քարտուղարի կողմից:

41.ԿԵԽՄ-ի նիստերը դռնբաց են: ԿԵԽՄ-ի նիստին կարող են հրավիրվել տվյալ նիստի օրակարգի նախագծում ընդգրկված հարցերին առնչվող անձիք, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ և այլն:

42.ԿԵԽՄ-ի անդամը՝ ԽՄ-ի նախագահի կողմից կարող է հեռացվել ԽՄ-ի նիստից՝ նիստի աշխատանքները խոչընդոտելու դեպքում:

43.ԽՄ-ի նիստի օրակարգը սահմանվում և իրականացվում է հետյալ կարգով.

1)ԿԵԽՄ-ի նիստի օրակարգի նախագիծը կազմում է համայնքի ղեկավարը.

2)ԿԵԽՄ-ի նիստի օրակարգի նախագիծը ձևավորվում է ԿԵԽՄ-ի քարտուղարին նիստից առնվազն հինգ աշխատանքային օր առաջ ներկայացված գրավոր հարցերից: Հարցեր կարող են ներկայացնել նաև ԿԵԽՄ-ի բոլոր անդամները.

3)ԿԵԽՄ-ի նիստի օրակարգի նախագիծը, քննարկվող հարցերի վերաբերյալ կից փաստաթղթերը ԿԵԽՄ-ի քարտուղարը ներկայացնում է ԽՄ-ի անդամներին նիստից առնվազն երկու աշխատանքային օր առաջ:

44.ԿԵԽՄ-ի նիստի օրակարգի նախագծում նշվում են.

1) նիստի անցկացման վայրը, ամսաթիվը և ժամը.
2) քննարկման ենթակա հարցերը.
3) քննարկվող յուրաքանչյուր հարցի զեկուցողի անունը և ազգանունը:

45.ԿԵԽՄ-ի նիստն սկսվում է ԽՄ-ի նիստի օրակարգի հաստատումով՝ ԽՄ-ի նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:

46. ԿԵԽՄ-ը՝ սույն կարգով սահմանված գործառույթների և գործունեության բնագավառների հարցերի շուրջ կազմում և ընդունում է որոշումներ:

47. ԿԵԽՄ-ի որոշումներն ընդունվում են եզրակացությունների և (կամ) առաջարկությունների ձևով, որոնք ներկայացվում են համայնքի ղեկավարին:

48. ԿԵԽՄ-ի որոշումը համայնքի ղեկավարի համար կրում են խորհրդատվական բնույթ: ԿԵԽՄ-ի որոշումների հիման վրա համայնքի ղեկավարը կարող է ընդունել համապատասխան որոշումներ:

49.ԿԵԽՄ-ի որոշումն ընդունվում է տվյալ նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ, իսկ հավասար ձայների առկայության դեպքում վճռորոշ է ԿԵԽՄ-ի՝տարեց անդամի ձայնը:

50. ԿԵԽՄ-ի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

51. ԿԵԽՄ-ի նախագահը ունի խորհրդակցական ձայնի իրավունք:

52. ԿԵԽՄ-ի որոշման մեջ նշվում են որոշման նախագծին կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած ԽՄ-ի անդամների անունները և ազգանունները:

53. ԿԵԽՄ-ի որոշումը ստորագրում են ԿԵԽՄ-ի նիստին ներկա անդամները:

54.ԿԵԽՄ-ի նիստերի ընթացքում կազմվում են արձանագրություններ:

55. Նիստի արձանագրությունը ներառում է.

1)նիստի անցկացման վայրը և ամսաթիվը.

2)նիստին մասնակցած ԿԵԽՄ-ի անդամների, հրավիրված անձանց անունները և ազգանունները.

3)նիստի օրակարգը.

4)քննարկված հարցերի, զեկուցումների և ելույթների հիմնական դրույթները.

5)ընդունված որոշումները, դրանց ներկայացման և հրապարակման ձևերը.

6)ընդունված որոշումներին դեմ քվեարկածների հատուկ կարծիքները(եթե այդպիսիք կան):

56. Նիստի արձանագրությանը կցվում են ԿԵԽՄ-ի քննարկմանը դրված նյութերը, ուսումնասիրությունները, լուսանկարները, տեսանյութերը և այլն:

57. ԿԵԽՄ-ի նիստերի արձանագրությունները ստորագրում է ԽՄ-ի քարտուղարը: ԿԵԽՄ-ի նիստերի արձանագրությունները ենթակա են հրապարակման:

## 6. ԿԵԽՄ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

58. ԿԵԽՄ-ի գործունեությանը առնչվող՝ համայնքի ավագանու գործառույթներն հետևյալն են.

1) համայնքի ղեկավարի ներկայացմամբ, հաստատում է սույն կարգը.
2) համայնքի ղեկավարի ներկայացմամբ, փոփոխություններ և (կամ) լրացումներ է կատարում սույն կարգի մեջ կամ դադարեցնում է սույն կարգի գործողությունը.
3) համայնքի ղեկավարի ներկայացմամբ, ԿԵԽՄ-ի եզրակացությունների և առաջարկությունների հիման վրա ընդունում է համապատասխան որոշումներ.

59.ԿԵԽՄ-ի գործունեությանը առնչվող՝ համայնքի ղեկավարի գործառույթներն են.

1) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող ԿԵԽՄ-ի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու վերաբերյալ.
2) առաջարկությունէ ներկայացնում համայնքի ավագանուն՝ փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու սույն կարգում կամ դադարեցնելու դրա գործողությունը.
3) ձևավորում է ԿԵԽՄ-ի անդամների ընտրության հանձնաժողով.
4) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն ԿԵԽՄ-ների կազմը հաստատելու վերաբերյալ.
5) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն ԿԵԽՄ-ների անդամների գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ.

6) կազմակերպում, ղեկավարում և նախագահում է ԿԵԽՄ-ի գործունեությունը.
7) անհրաժեշտ պայմաններ է ստեղծում ԿԵԽՄ-ի՝ սույն կարգով նախատեսված գործունեության իրականացման, նիստերի կազմակերպման ու անցկացման համար.
8) հրավիրում և վարում է ԿԵԽՄ-ի նիստերը.
9) որոշում է ԿԵԽՄ-ի նիստերին հրավիրվող անձանց կազմը.
10) ձևավորում է ԿԵԽՄ-ի նիստերի օրակարգերի նախագծերը.
11) ծանոթանում է ԿԵԽՄ-ի ուսումնասիրություններին, եզրակացություններին և առաջարկություններին.
12) ԿԵԽՄ-ի եզրակացությունների և առաջարկությունների հիման վրա նախաձեռնում է անհրաժեշտ գործողություններ, ընդունում է որոշումներ կամ առաջարկություններ է ներկայացնում համայնքի ավագանուն համապատասխան որոշումներ ընդունելու համար:

60. ԿԵԽՄ-ի գործունեությանը առնչվող՝ համայնքի աշխատակազմի քարտուղարի գործառույթներն են.

1) կազմակերպում է ԿԵԽՄ-ի գործունեության տեղեկատվական և մասնագիտական ապահովումը, աջակցում է ԿԵԽՄ-ի գործունեությանը, նիստերի կազմակերպմանը և անցկացմանը.
2) իրականացնում է ԿԵԽՄ-ի քարտուղարի գործառույթները անձամբ կամ նշանակում է ԿԵԽՄ-ի քարտուղարին:

61. ԿԵԽՄ-ի քարտուղարի գործառույթներն են.

1) հարցեր է ընդունում ԿԵԽՄ-ի անդամներից՝ նիստերի օրակարգերի նախագծերում ընդգրկելու համար.
2) ապահովում է ԿԵԽՄ-ի կազմակերպչա-տեխնիկական աշխատանքների իրականացումը.
3) ապահովում է ԿԵԽՄ-ի անդամների և նիստերին հրավիրված անձանց իրազեկումը նիստերի անցկացման օրվա, ժամի, վայրի և քննարկվող հարցերի մասին.
4) վարում է ԿԵԽՄ-ի գործավարությունը.
5) կազմում և ստորագրում է ԿԵԽՄ-ի նիստերի արձանագրությունները.
6) ապահովում է ԿԵԽՄ-ի գործունեության, ընդունված որոշումների հրապարակայնությունը:

62. ԿԵԽՄ-ի անդամների գործառույթներն են.

1) մասնակցում են ԿԵԽՄ-ի նիստերին.
2) հարցեր են ներկայացնում ԿԵԽՄ-ի նիստերի օրակարգերի նախագծերում ընդգրկելու համար.
3) ներկայացնում են բանավոր կամ գրավոր կարծիք ԿԵԽՄ-ի նիստերի ընթացքում քննարկվող հարցերի վերաբերյալ.
4) մասնակցում են ԿԵԽՄ-ի որոշումների ընդունման քվեարկությանը.
5) ստորագրում են ԿԵԽՄ-ի որոշումները.
6) ծանոթանում են ԿԵԽՄ-ի նիստերի արձանագրություններին.
7) կատարում են ԿԵԽՄ-ի որոշումներից բխող կամ ԿԵԽՄ-ի նախագահի կողմից տրված հանձնարարականներ:

## 7. ՍՈՒՅՆ ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

63. Սույն կարգը վերանայվում է համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ: Համայնքի ղեկավարը կարող է առաջարկություններ ներկայացնել համայնքի ավագանուն՝ փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու սույն կարգում կամ դադարեցնելու դրա գործողությունը:

64. Սույն կարգի մեջ փոփոխությունների և (կամ) լրացումների կատարումը, գործողության դադարեցումը, համայնքի ղեկավարի ներկայացմամբ, իրավասու է կատարել միայն համայնքի ավագանին՝ իր համապատասխան որոշմամբ:

## 8.ԿԵԽՄ-ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

65.Համայնքում գործող ԿԵԽՄ-ի գործունեությունը դադարեցվում է.

1) երբ լրացել է համայնքի ղեկավարի լիազորությունների ժամկետը կամ վաղաժամկետ դադարել, դադարեցվել է.
2) օրենքի ուժով համայնքը վերակազմակերպվել է:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն

*Հավելված N 2*

*Աշտարակ համայնքի ավագանու 2023 թվականի*
*սեպտեմբերի 12-ի N 121-Ն որոշման*

# Դ Ի Մ ՈՒ Մ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ

**Անձնական տվյալներ**

........................ .............................. .......................... ..................................................

անուն ազգանուն հայրանուն ծննդյան օր, ամիս, տարի

**Ով է առաջադրել Ձեր թեկնածությունը**

☐ Ինքնառաջադրում ☐ ..................................................................................

Ձեր թեկնածությունն առաջադրող կազմակերպության կամ խմբի անվանումը

**Սեռ** **Հասցե**

փաստացի բնակության հաշվառման

☐ արական ☐ իգական .......................................... ..............................................

**Հեռախոս**

աշխ: .................................... տուն: .................................... Բջջ: ........................................

**Էլեկտրոնային հասցե**

..............................................................................................................................

**Դուք համայնքի բնակի՞չ եք**

որքան ժամանակ

☐ այո ☐ ոչ ..............................................................

**Կրթություն** **Ազգություն**

☐ բարձրագույն ☐ միջնակարգ ☐ այլ ..............................................................

**Մասնագիտություն**

1. ........................................................... 2. ...........................................................

Նշեք այն խորհրդակցական մարմնի անվանումը, որին ցանկանում եք անդամակցել

